Խազարների երկիրը եւ կոտորեց նոցանից մեծ բազմութիւն. դորանից յետոյ պատերազմեցաւ Համազին երկրի բնակիչների հետ եւ խաղաղութիւն կապեց նոցա հետ այն պայմանով, որ նա նոցա փոխադրէ Խայզան գաւառը, տալով նոցա (բնակելու համար) նորա քաղաքներից երկուսը։ Ապա յարձակեցաւ Ղաւումիկների[1] վերայ, գերեց նոցանից ոմանց, վերադարձաւ եւ մնաց Շաքէում, իսկ նորա զօրքը ձմեռեց Պարտաւում եւ Փայտակարանում։ Երբ Խազարքը, անցնելով Արաքսը, մտան երկրի խորքերը, նա ճակատեց նոցա հետ Վարդանի[2] դաշտավայրում. սոքա հեռացած դէպի Արտաւիլ. Ջարրահ կռուեց նոցա հետ 4 փարսախ Հայաստանին կից տարածութեան վերայ շարունակ 3 օր եւ նահատակեցաւ այս ճակատամարտում իւրայիններով, ուստի գետը Ջ-րր-հ կոչւեցաւ, որպէս եւ կամուրջը, որ նորա վերայ էր։

---

1 غومیك Masudi II, 40: غميق Jakut: "Բար-էլ-աբւաբ նաւահանգիստ է այս (Կասպից) ծովի վերայ, որտեղ կը ժողովին Խազարք, Սարիրք, Սինդարք (Սամանդարք?), Խայզանք, Կուրջք, Բուքլանք, Ջարանկիրանք եւ Ղմիկք (غُميك). վերջիններս Բար-էլ-աբւաբից հիւսիս կը բնակին„։ Kamuss: Ալան՝ ցեղի եւ տէրութեան անուն է . . . դա այն երկիրն է, որ այժմ Դաղստան կը կոչւի եւ որի մայրաքաղաքն է Կոյմուկ։ Այժմեան Այմաք գիւղը՝ Դերբենդից հիւսիս Թերեւս արաբացի մատենագրերի աւանդած ցեղի անունն իւր մէջ կը յիշատակէ։

2 وَرْثان մեր մատենագրերի Վարդանակերտն է։ Istaxri: "Արաքսը կ՚անցնի Վարդանի դռների առջեւից... Փայտակարանից մինչեւ Վարդան 7 փարսախ է„։ Ըստ Edrisy (II, 323) այդ տարածութիւնը հաւասար է 12 փարսախի (= 36 մղոնի)։ Ibn Xordadbeh Վարդան քաղաքը կ՚անուանէ Ատրպատականի ծայրագոյն սահման (119, 227), Պարտաւից 8 կայարանով հեռու (122)։ (1 փարսախ = 3 արաբական մղոն = $5^{3}/_{5}$ վերստ)։